



236 B

# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 23896

Փետրուար 23, 1978

Արժանաշնորհ  
Տ. ԼԵԼՈՆ ԶԻՆՅ. Առաքելեան  
Հովիւ Ս. Համբարձում Եկեղեցւոյ  
Նախագահ Ժիական Խորհուրդի  
Պրիմֆորթ.

Սիրելի Տէր ԼԵԼՈՆ,

Ստացած ենք 1978 Փետրուար 16 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը  
հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ Յունուար 28ին գումարուած համայն-  
քիղ Ժիական ժողովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի չորս անդամոց  
ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք  
ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր Ժիական ժողովը տեղի ունեցած է թեմական  
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք  
Ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել Ժիական Խորհուրդի նորընտիր  
Գիւանի անդամոց եւ Եկեղեցւոյդ հնթակայ մարմիններու վարչութեանց  
ատենապետներու եւ թեմական պատգամաւորի անունը, հասցէն եւ հեռա-  
ձանի թիւը: (Վերջնոյն հասցէին փոխուած ըլլալու պարագային):

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր  
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի  
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԿՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Ռալֆ Քրէքասո  
Տքթ. Պրիմ Հայրապետեան  
Ռիչըրտ Սաչեան  
Ռիչըրտ Գալֆան